ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 հուլիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

103
(2769)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԾԱԽՍԵԼ ԵՆ 2,5 ՄԼՆ ԴՈԼԱՐ, ԲԱՅՑ ԱՆԱՐԴՅՈՒՆՔ

Երեկ՝ Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական նիստի ժամանակ, պաշտոնյաները միամիտ եւ անմեղ դեմքերով զեկուցեցին, որ բեռնատար մեքենաները գտնվում են անսարք վիճակում, եւ այնպիսի տպավորություն էր, որ նոր են տեղեկացել այդ մասին: Սա՝ այն դեպքում, երբ միայն բեռնատար մեքենաների սպասարկման համար մեկ տարում ծախսվել է մոտ 1մլրդ դրամ («Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է գնումների կայքը, որտեղ նշված է, որ ամեն եռամսյակը մեկ, իսկ որոշ դեպքերում՝ երկու անգամ հատկացվել են 128-միլիոնական դրամներ): Բայց, չնայած ծախսված մոտ 2.5 մլն դոլարին, հիմա ունենք մի ամբողջ հիմնարկ՝ իր խոտանված մեքենաներով: Հետաքրքիր է, թե ուր են ծախսված գումարները: Իհարկե, ղեկավար կազմը ցանկանում է մեղքի մեծ բաժինը դնել վարորդների վրա, սակայն վարորդները մեզ ահազանգում են, որ այս հարցում բացարձակ մեղք չունեն: Հիմնականում 2019 թվականի արտադրության մեքենաներ են աշխատում աղբահանության համար, որոնց յուղերը ժամանակին չեն փոխվել, փոխարինվելուց էլ փոխարինվել են անորակ յուղերով, հերթական մեքենաների տեխզննումները ժամանակին չեն կատարվել, դրա համար ունենք այսօր այս վիճակը: Բացի այդ, բազմաթիվ աշխատակիցներ ահազանգում են, որ «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» հիմնարկի տնօրեն Բագրատ Աղաջանյանի մեղմ ասած վատ վերաբերմունքի պատճառով (ծեծ, հայհոյանքներ, ստիպողաբար ավելի աշխատացնել եւ չվճարել եւ այլն) ազատման դիմումներ են գրում: Նույնիսկ կան աշխատակիցներ, որոնք ցանկանում են ազատման դիմումներ գրել, սակայն վախենալով, որ իրենց ծեծի կենթարկեն՝ ուղղակի աշխատանքի չեն հաճախում: Ի՞նչ է կատարվում այս ոլորտում: «Ժողովուրդ» օրաթերթը հարցումներ է ուղարկել քաղաքապետարան, որոնց պատասխանները կհրապարակենք ստանալուն պես:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի ու վարչապետ Նիկոլ Փաշինյանի միջեւ թեժ խոսակցություն է եղել վերջերս: Բանն այն է, որ հուլիսի 10-ին շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը այցելել է Սեւանի թերակզուում գտնվող հիդրոօդերեւութաբանական կայանում տեղադրված նոր ավտոմատ համակարգի բացմանը: Կայանը, որը Ճապոնիայի կառավարության կողմից ֆինանսավորված եւ ՄԱԶԾ-ի կողմից իրականացված ծրագրի շրջանակներում է տեղադրվել, չի անցել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում: Հենց այս պատճառով էլ մեծ աղմուկ է բարձրացել, եւ տհաճ խոսակցության առիթ է ստեղծվել Նիկոլ Փաշինյանի եւ Հակոբ Սիմիդյանի միջեւ: Փաշինյանը նրան մեղադրել է, որ հերիք չէ՝ սարքն առանց համապատասխան ստուգում անցնելու տեղադրվել է, նաեւ Սիմիդյանը մեծ միջոցառում է կազմակերպել եւ շատ կարեւոր հյուրեր հրավիրել: Այս տեղեկության հավաստիությունը պարզելու համար «Ժողովուրդ» օրաթերթը փորձել է կապ հաստատել շրջակա միջավայրի նախարարի մամուլի քարտուղար Անի Հակոբյանի հետ: «Նմանատիպ գործունեություն ունեցող սարքը անհրաժեշտ չի, որ անցնի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում(ՇՄԱԳ): Ասեմ նաեւ՝ դա եղել է պարզապես կայանի համալրում, համակարգը մեխանիկականից անցել է ավտոմատ գործարկման»,- ասաց Հակոբյանը: Այսինքն՝ նա փորձում է հերքել, թե նման բան է տեղի ունեցել, սակայն մեր աղբյուրները հակառակն են պնդում:



ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն ուրբաթ օրը հայտարարություն տարածեց այն մասին, որ ՀՀ պաշտպանության նախարարության մի շարք պաշտոնատար անձանց նկատմամբ իրականացված գաղտնի քննչական համալիր գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Վ. Մ.-ն, զբաղեցնելով ՀՀ ՊՆ իրային բազայի N զորամասի հրամանատարի պաշտոնը, «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերության տնօրեն Վ. Ե.-ի օգտին հովանավորչություն կատարելու համար նրանից պահանջել է ընդհանուր 19 մլն 500 հազար ՀՀ դրամ կաշառք, որի մի մասը ստացել է: Ու պարզվում է՝ սա միակ դեպքը չէ, որ բացահայտված է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները հայտնում են, որ քննչական այս մարմինը նաեւ մի շղթա է բացահայտել ՀՀ պաշտպանության նախարարությունում, երբ շատ հրամանատարներ գումարի դիմաց զինվորների տեղափոխություններ են իրականացրել, ինչի համար հայտնվել են իրավապահների թիրախում: Մեր աղբյուրները փոխանցում են, որ արդեն Արարատի մարզում բացահայտվել է այսպիսի շղթա: Շուտով էլի հրամանատարներ են կալանավորվելու:

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել հուլիսի 10-ին ՀՀ վճռաբեկ դատարանի հիմնադրման 25-ամյակի առիթով կազմակերպված տոնական ֆուրշետի արարողությունից: Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ միջոցառմանը հրավիրված են եղել ՀՀ վճռաբեկ դատարանում երբեւէ աշխատած բոլոր նախկին եւ ներկա դատավորները: Միջոցառումը սկսվել է Վճռաբեկի նախագահ, իշխանությունների «սրտի դատավոր» Լիլիթ Թադեւոսյանի ելույթով, որից ներկաները որեւէ բան չեն հասկացել եւ կարծիք են հայտնել, որ նախագահը խոսեց «20 որպե՝ ոչնչի մասին»: Ավելի ուշ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը փորձել է հումորներ անել մտերիմ երեկոն ամբողջացնելու համար, սակայն այդ հումորները եւս ներկա դատավորներից շատերի ամար անընկալելի են եղել: Մեզ հայտնի դարձավ նաեւ, որ նախկիններից միջոցառմանը մասնակցել է Վճռաբեկ դատարանի նախկին նախագահ Արման Մկրտումյանը, սակայն ուշագրավ է, որ միջոցառմանը չի մասնակցել Վճռաբեկի նախկին նախագահ, այժմ ՍԴ դատավոր Երվանդ Խունդկարյանը: Չի մասնակցել նաեւ նախկին նախագահ Հովհաննես Մանուկյանը: Ի տարբերություն Խունդկարյանի, որը Երեւանում է, Մանուկյանը երկրում չէ, թեեւ հայտնի չէ՝ լինելու դեպքում կմասնակցեր, թե ոչ: Իսկ ներկա դատավորները ներկայացուցչական կազմով բոլորը մասնակցել են միջոցառմանը: Ավելին՝ ներկաներից լայն ժպիտով, առանձնակի հիացմունքով եւ հարգանքով մասնակցել են այնպիսի դատավորներ, որոնք սկզբունքորեն հաշտ չեն իշխանությունների արած քայլերի, դատական համակարգի նկատմամբ ճնշումների հետ: Միջոցառմանը մասնակից մեր աղբյուրին զարմացրել էր նաեւ որոշ «սկզբունքային» դատավորների ջերմ, ակտիվ ձեռքսեղմումները, ողջագուրումները իշխանության ներկայացուցիչների հետ: Հետաքրքիր է՝ իսկ շնորհավորանքների, ձեռքսեղմումների արանքում գոնե մի երկու բառ հնչեցրել են արդյոք իրենց մտահոգությունների մասին:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

Արցախի պետնախարար Գուրգեն Ներսիսյանը հայտարարեց, որ Արցախում մեկնարկած համաժողովրդական շարժումը կծավալվի նաեւ Հայաստանում: Այս առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի Հանրապետության նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանի հետ:

-Ես կարծում եմ, որ, ընդհանրապես, առանց կոչերի արդեն Հայաստանի Հանրապետությունում եւ Սփյուռքում պետք է լինեին շարժումներ: Հասկանու՞մ եք, մեզ նայում են, ուսումնասիրում են եւ՛ թշնամիները, եւ՛ բարեկամները: Մեզ մոտ այժմ համար մեկ հարցը դա պետք է լինի: Եթե դա չլինի, դա ի՞նչ է նշանակում: Նշանակում է, որ միայն արցախցիներն են իրենց մասին մտածում: Եթե անտարբեր են բոլորը, մենք իրավունք չունենք այս պարագայում որեւէ մեկին մեղադրելու: Առաջինը հենց մեզ պետք է գնահատենք եւ ինքներս մեզ մեղադրենք բոլոր խնդիրների մեջ: Մեկը մեղադրում է ռուսին, մյուսը՝ ամերիկացուն: Ձեզ մեղադրե՛ք, Ձեզ: Այդպես չէ՞: Ուրեմն մի ամբողջ հայրենիք կորցնում ենք, ոչ մեկի պետքը չէ: Ցավալի է:

Երբ որ սկսվեց շրջափակումը դեկտեմբեր ամսին, մենք կանգնած էին ՄԱԿ-ի գրասենյակի կողքը, մեզ հետ 10 հոգի մարդ էին հավաքված, ես սրա մասին բարձրաձայնել եմ բազմիցս: Հազարավոր մարդիկ տժժում էին Հանրապետության հրապարակում, Նոր տարի էին նշում՝ դեռեւս չեկած: Ամոթ է սա, չէ՞: Մենք ի՞նչ ազգ ենք, ընդհանրապես, ո՞վ ենք մենք: Կամ մի ժողովուրդ, որն անցել է ցեղասպանության միջով, այսօր պատրաստ է հրաժարվել իր պատմական ճանապարհից, իր խորհրդանիշներից, ամեն ինչից: Սրա վերջը գիտե՞ք՝ ինչ է: Սա ցույց է տալիս, որ պատրաստ չենք պետականություն ունենալուն, մենք չգիտենք՝ ինչ է պետականությունը, չգիտենք՝ ինչ է ազգանունը, միշտ ապրել ենք ճորտի կարգավիճակում, ու այն շարունակում է մնալ մեր մեջ: Եթե չես պայքարում քո ապագայի համար, ուրիշ մեկը չի գա պայքարի քո փոխարեն, այլ գալու է քո տարածքի համար պայքարի, քեզ ստրկացնելու համար է պայքարելու: Մենք կանգնած ենք շատ օրհասական իրավիճակի եզրին. մեր վաղվա օրն է որոշվում այսօր: Իսկ եթե այս անգամ էլ ձախողենք, երբեւիցե պետականություն չենք կարողանա ունենալ այլեւս, որովհետեւ անիմաստ է լինելու: Վերջին մի քանի հարյուրամյակի ընթացքում ազգային ազատագրական շարժումը սկսել է Արցախից:

-Ի՞նչ եք կարծում, Հայաստանում նախաձեռնությունը արդյունք կունենա՞:

-Եթե Հայաստանում չեղավ մասայական շարժում, ուրեմն հայ ժողովուրդը չկա, ուրեմն հայ ժողովուրդը չի այսօր ապրում Հայաստանում, կամ ավելի բան եմ ասում՝ իր իսկական դեմքն է ցույց տալիս: Սա վատագույն դեպքն է, բայց մենք ախտորոշումը հստակ պետք է դնենք:

-Այս մի քանի օրվա ընթացքում շարժումն ի՞նչ արդյունքներ է գրանցել:

-Արդյունքն այն է, որ ժողովուրդն իր կամքն արտահայտում է, կան հայտարարություններ, ու տարբեր երկրներ տեսնում են, որ այս մարդիկ վատ վիճակում են ու պատրաստ են քայլեր ձեռնարկել: Դրսից տեսնում են սա ու հաշվի են առնում:

Զրուցեց ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՔԻՆ

«Ընդդիմությունն այստեղ է. ինձնից բացի, ես տեսա, որ «Հայաստան» խմբակցությունից եւս մեկ պատգամավոր մասնակցում է այս ակցիաներին»,- հուլիսի 17-ին՝ ՌԴ դեսպանատան մոտ հանուն Արցախի բողոքի ակցիայի ժամանակ, լրագրողների հետ զրույցում նշեց ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանը՝ անդրադառնալով դիտարկմանը, որ ընդդիմությունը պասիվ է եւ չի մասնակցում այս ակցիաներին:

«Արձակուրդների շրջան է, չեմ կարող անհատապես բոլորի համար պատասխան տալ, բայց երկու խմբակցությունների ներկայացուցիչներն այստեղ են, քաղաքական առումով ներկայացվածություն կա: Ես, բնականաբար, ինչպես նաեւ իմ մյուս ընդդիմադիր գործընկերները մշտապես եղել ենք Արցախի կողքին: Կարծում եմ՝ ինչքան բարձր գոռանք, ինչքան բարձր մեր պահանջները ներկայացնենք, այնքան լսելի կլինի: Որովհետեւ չի կարելի անտարբերության մեջ թողնել 120 հազար մարդկանց ճակատագիրը եւ հաշտվել Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականության հետ, որ Արցախն Ադրբեջանի կազմում է: Մենք բոլորով պետք է ընդվզենք եւ բացատրենք ամբողջ աշխարհին, որ Արցախը չի կարող լինել Ադրբեջանի կազմում, հակառակ դեպքում մենք 21-րդ դարում նոր ցեղասպանության ենք դատապարտում մեր ժողովրդին: Ինչքանո՞վ է դա տեղավորվում ՄԱԿ-ի սկզբունքների մեջ, միջազգային իրավունքի մեջ, երբ մարդկանց ապրելու իրավունքը, կյանքի իրավունքը, երեխաների, հղիների եւ մյուս բոլոր կատեգորիաների մարդկանց իրավունքները ամենօրյա ռեժիմով ոտնահարվում են»,-ասաց նա:

Թովմասյանը հիշեցրեց, որ դեռեւս մայիսից ինքը սկսել է ստորագրահավաք, որի արդյունքները շուտով կամփոփեն. «Բավականին տպավորիչ արդյունքներ են, ինչը նշանակում է, որ հայ ժողովուրդը չի վստահում Նիկոլ Փաշինյանի վարած արտաքին քաղաքական օրակարգին եւ այն քայլերին, որոնք հիմա իրականացվում են: Դրանք ուղղակի մերժվում են»:

Հիշեցնենք, որ Թագուհի Թովմասյանը մայիսի սկզբից Լաչինի միջանցքում Ադրբեջանի կողմից տեղադրված անցակետը հեռացնելու պահանջով ստորագրահավաք էր նախաձեռնել: Նա նշել էր, որ այս ձեւով իր աջակցությունն է հայտնում «ՈՉ Արցախի էթնիկ զտմանը» երիտասարդական շարժմանը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ՝ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ աշխատանքային այցով մեկնել է Արարատի մարզ: Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ Արտաշատ քաղաքում կայացած խորհրդակցության ժամանակ վարչապետին ներկայացվել է Արարատի մարզպետի աշխատակազմի՝ 2022թ. գործունեության հաշվետվությունն ու ընթացիկ տարում իրականացվող ծրագրերի ընթացքը:

Պաշտոնական հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ Արարատի մարզի ներդրումները 2018թ.-ից հետո պակասել են. «2018թ. կատարվել է 136,7 մլն դրամի ներդրում, 2021-ին՝ 116,9 մլն դրամի, 2022թ.-ին՝ 103,4 մլն դրամի ներդրում»:

Խորհրդակցությանը մասնակից տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոյանը, Պետական վերահսկողության ծառայության պետ Ռոմանոս Պետրոսյանը, էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը, Արարատի մարզպետ Սեդրակ Թեւոնյանը եւ այլ պաշտոնատար անձինք քննարկել են բյուջեի ամբողջական ֆինանսավորմամբ 2018-2022թթ. իրականացված ծրագրերը՝ ջրամատակարարման, ոռոգման, ճանապարհների բարելավման, դպրոցների, մանկապարտեզների, առողջապահական հիմնարկների, մշակութային օբյեկտների հիմնանորոգման, կառուցման աշխատանքների շուրջ, եւ ոչ մի խոսք Արարատի մարզի անվտանգության մասին:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ պաշտոնական հաղորդագրության մեջ բացակայում է տեղեկությունը, թե վարչապետը ինչ է քննարկել կամ քննարկել է արդյոք որեւէ հարց՝ կապված կրակոցների տակ ապրող Երասխի եւ Արարատի մարզի այլ բնակավայրերի հետ: Ստացվում է՝ Նիկոլ Փաշինյանը խորհրդակցություններ է անում՝ իրականությունից կտրված, չքննարկելով անգամ մեր երկրի իրական ռիսկերը:

ՀԱՏԵՑ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՇԵՄԸ

«Անցած շաբաթ մեր «Հայաքվե» քաղաքացիական օրենսդրական նախաձեռնությունը շարունակում էր թափ հավաքել՝ ընդարձակելով իր աշխարհագրությունը, ձեռք բերելով նորանոր աջակիցներ եւ դառնալով անմիջական գործոն, որն արդեն սկսում է ազդել գործող իշխանության կողմից վարվող քաղաքականության վրա»,- ֆեյսբուքյան իր էջում գրում է «Հայաքվե» նախաձեռնության հիմնադիր Ավետիք Չալաբյանը.

«Ստորագրահավաքի առաջին երկու շաբաթների արդյունքում մենք հատեցինք անհրաժեշտ նվազագույն շեմի կեսը, սակայն բնավ մտադիր չենք բավարարվել ձեռք բերված տեմպով: Այդ նպատակով մենք շարունակում ենք ընդլայնել «Հայաքվե»-ի աշխարհագրությունը, ընդարձակում ենք մեր ներկայությունը լրատվամիջոցներում եւ հանրային վայրերում, ավելացնում ենք մարզային այցելությունների թիվը: Բոլոր մեր այն աջակիցներին, որոնք արդեն միացել են «Հայաքվե»-ին, խնդրում ենք չբավարարվել այդքանով եւ հորդորել ձեր մտերիմներին եւ ծանոթներին եւս միանալ այս կարեւորագույն նախաձեռնությանը: Ովքեր որոշել են միանալ, բայց դեռ չեն հասցրել, խնդրում ենք չհապաղել եւ դա անել այս շաբաթ. ձեր ձայնը հիմա նոր թափ կհաղորդի այս նախաձեռնությանը եւ իր հետեւից կբերի նոր աջակիցներ: Եթե դուք դեռ երկմտում եք, ձեր մոտ դեռ կան հարցեր, մի՛ վարանեք, բարձրաձայնե՛ք դրանք, մենք սիրով պատրաստ ենք ցանկացած հարցի պատասխանել: Իսկ եթե դուք վստահ եք արդեն ձեր կատարած ընտրության մեջ եւ ցանկանում եք նաեւ օգնել մեզ, մի՛ վարանեք, կամավորագրվե՛ք «Հայաքվե»-ին, միացե՛ք մեր՝ օր օրի աճող, հայրենատեր, ժրաջան եւ համերաշխ թիմին, դարձե՛ք մեզանից մեկը եւ առաջ տարե՛ք մեր բոլորի «Հայաքվե»-ն»,- նշել է նա:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ

Մատենադարանի տնօրեն է ընտրվել ԿԳՄՍ փոխնախարար Արա Խզմալյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հուլիսի 17-ին նախատեսված էր Մատենադարանի տնօրենի ընտրությունները: Առաջադրված էին երեք թեկնածու՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանը, Մատենադարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Մաթեւոսյանը, բանասիրական եւ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արծրուն Սահակյանը:

Մեզ հայտնի դարձավ, որ իշխանություններն ամեն գնով ուզում էին Մատենադարանի տնօրեն նշանակել իրենց «սրտի թեկնածուին»՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանին:

Ավելին՝ որպեսզի Արայիկ Խզմալյանը կարողանա մասնակցել Մատենադարանի տնօրենի ընտրություններին, հատուկ փոխել են տնօրենի ընտրության կանոնակարգը, որը Մատենադարանի հիմնադրման օրվանից դրված ավանդույթ է, այն է՝ Մատենադարանը գիտական հաստատություն է, եւ տնօրենը պետք է լինի գիտնական. Արայիկ Խզմալյանը գիտական դոկտորի աստիճան չունի:

Այս առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանի հետ՝ պարզելու համար, թե ինչպես է առանց գիտական աստիճանի առաջադրվել Մատենադարանի տնօրենի ընտրություններում՝ որպես թեկնածու, բայց վերջինս չպատասխանեց մեր հեռախոսազանգերին:

Նշենք, որ Մատենադարանն ունի երկու ներկայացուցիչ՝ Կարեն Մաթեւոսյանը եւ Արծրուն Սահակյանը: Ըստ շրջանառվող տեղեկությունների՝ նրանց միջեւ պայքարը թեժ է եղել, քանի որ երկուսն էլ բավականին լավ տիրապետում են Մատենադարանի թե՛ խնդիրներին, թե՛ ներքին խոհանոցին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՀ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԻ ԿՈՉԸ

«Ողջունում եմ Հայաստանի Հանրապետությունում մեկնարկած՝ համաժողովրդական շարժման մասնակիցների իրազեկման ակցիաները. դրանք պետք է շարունակվեն այնքան, քանի դեռ բոլորին հասու չի դարձել Արցախում եւ դրա շուրջը ստեղծված իրավիճակը, եւ քանի դեռ հստակ քայլեր չեն ձեռնարկվել Արցախի ժողովրդի հանդեպ իրականացվող այս բացահայտ հանցավոր քայլերը դադարեցնելու ուղղությամբ»,- ֆեյսբուքյան իր էջում գրում է ԱՀ պետնախարարը.

«Կանգնե՛ք այդ պատասխանատվությունը ստանձնած արցախցի մանուկների ու երիտասարդների կողքին: Մի կողմ դրե՛ք բոլոր տեսակի տարաձայնությունները եւ փորձե՛ք համախմբվել, իսկ եթե դա ոմանց համար սկզբունքայնության հարց է, ապա խնդրում եմ զիջող եղե՛ք. լավ է լինել անսկզբունք, քան անհայրենիք»,- նշել է նա:

ՀԱՅԱՍՏԱՆ

Ի ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ

ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակի մոտ մեկնարկած ակցիան՝ ի աջակցություն Ադրբեջանի կողմից ամբողջական շրջափակման մեջ գտնվող Արցախի, շարունակվեց Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան մոտ:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ակցիայի մասնակիցները ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակի մոտից երթով շարժվեցին դեպի ՌԴ դեսպանատուն:

Ակցիայի մասնակիցները Ռուսաստանից պահանջեցին քայլեր ձեռնարկել Լաչինի միջանցքը բացելու ուղղությամբ:

44-օրյա պատերազմում վիրավորված զինծառայողի մայր Ադելինա Ավետիսյանը նշեց, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ից հետո Ռուսաստանը դարձել է Արցախի բնակչության անվտանգության երաշխավորը՝ հավելելով, որ Արցախի ժողովուրդը հավատաց ՌԴ-ի խոստումներին եւ վերադարձավ Արցախ: «Ռուսական խաղաղապահ կոնտինգենտի կողմից խաղաղ կյանք էր խոստացվել: Խոստացվել էր նաեւ, որ կապահովվի տրանսպորտի եւ մարդկանց ազատ տեղաշարժը Լաչինի միջանցքով: Սակայն այսօր մենք կանգնած ենք հումանիտար աղետի առաջ, քանի որ 2022 թվականի դեկտեմբերի 12-ին Ադրբեջանն էկոակտիվիստների միջոցով արգելափակեց Լաչինի միջանցքը: Ադրբեջանը նաեւ անցակետ է տեղակայել միջանցքում, ու ելումուտը իրականացվում է բացառապես նրանց թույտվությամբ: Ավելի քան 120 հազար մարդ շրջափակման մեջ են, որոնք չեն կարողանում ելումուտ անել, չեն կարողանում համապատասխան բուժօգնություն ստանալ: Ավելի քան 30 հազար երեխաներ ամիսներ շարունակ մրգեր, բանջարեղեն չեն ուտում: Արցախը գոյատեւում է ներքին ռեսուրսների հաշվին, խանութները դատարկ են, մարդիկ ստիպված են 5-6 ժամ հերթի մեջ կանգնել՝ որեւէ ապրանք ձեռք բերելու համար: Բազմաթիվ մարդիկ գործազուրկ են դարձել, շատերը չեն կարողանում վճարել կոմունալ ծառայությունների, ապրուստի համար: Ադրբեջանն այսպիսով ցանկանում է կյանքի անտանելի պայմաններ ստեղծել Արցախի ժողովրդի համար»,- նշեց նա:

Ադրբեջանական ԽՍՀ-ից փախստականների համագումարի համակարգող Մարիամ Ավագյանը իր ելույթում նշեց, որ Լաչինի միջանցքով Հայաստանի հետ կապի խզումը հայերին Արցախից դուրս մղելու մեթոդներից է: «Ադրբեջանն, անշուշտ, ուզում է դատարկված Արցախ, եւ եթե հայերն իրենց կամքով չհեռանան, որեւէ կասկած չկա, որ Ադրբեջանն այդ հարցը կփորձի լուծել ռազմական ճանապարհով՝ անելանելի պայմաններ ստեղծելով արցախցիների համար, ինչն այսօր անում է՝ կրակելով դաշտում աշխատող հայերի վրա: Ակնհայտ է, որ Ադրբեջանը նոր պատերազմ է ցանկանում հրահրել», - ասաց Ավագյանը՝ ՌԴ-ից պահանջելով քայլեր ձեռնարկել Լաչինի միջանցքը բացելու ուղղությամբ:

Ակցիայի ընթացքում կազմակերպիչների հետ հանդիպում եւ առանձին քննարկում ունեցավ ՌԴ դեսպանատան ներկայացուցիչը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՏԻ ⇨

Երեւանի Մյասնիկյան պողոտայում խցանումները մեղմելու նպատակով կատարվել են ուսումնասիրություններ:

Երեւանի քաղաքապետարանից հայտնում են, որ հաշվի առնելով միջազգային փորձը՝ նախատեսվում է ձեռք բերել հատուկ տեխնիկա, որը հնարավորություն կտա ծանրաբեռնված երթեւեկության ժամերին ավելացնել լրացուցիչ գոտի հանդիպակաց ուղղության հաշվին՝ տեղաշարժելով բաժանիչ գոտում տեղակայված պատնեշները:



ԿՄՆԱ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ

ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը կշարունակի մնալ կալանավորված:

Փաստաբան Տիգրան Աթանեսյանը հայտնել է, որ դատարանը մերժել է իր՝ վերաքննիչ բողոքը:

«Ինչպես ես հեշտությամբ կանխատեսում էի, Վերաքննիչ կոռուպցիոն դատարանը մերժեց իմ բացարկը եւ վերաքննիչ բողոքը եւ քաղաքական բանտարկյալ Արմեն Աշոտյանին թողեց կալանքի տակ», - Facebook-ում գրել է Աթանեսյանը:

ՆԱԽԱՐԱՐԸ ՀՐԱՎԵՐ Է ՍՏԱՑԵԼ

Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հուլիսի 17-ին ընդունել է Հաաստանում Արաբական Միացյալ Էմիրությունների նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Նարիման Մոհամմեդ Շարիֆ Աբդուլլա Ալմուլլային: «Ժողովուրդ» օրաթերթը այս մասին տեղեկանում է Սուրեն Պապիկյանի ֆեյսբուքյան էջից:

«Շնորհավորել եմ տիկին դեսպանին եւ մաղթել արդյունավետ աշխատանք: Հանդիպման ընթացքում քննարկվել են պաշտպանության ոլորտում հայ-էմիրաթական համագործակցությանն առնչվող հարցեր: Տիկին դեսպանը փոխանցել է 2023 թ. նոյեմբերին Դուբայում կայանալիք Դուբայի ավիացիոն ցուցահանդեսին մասնակցելու՝ ԱՄԷ փոխնախագահ, վարչապետ, Դուբայի կառավարիչ, պաշտպանության նախարար Շեյխ Մուհամմադ Բին Ռաշեդ Ալ-Մաքթումի հրավերը»:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵՑ

Մ-2 Երեւան-Երասխ-Գորիս-Մեղրի ճանապարհահատվածի Արարատ համայնքի տարածքում գտնվող 12,2 կմ հատվածը հիմնանորոգվել է: «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում այս մասին գրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ կից հրապարակելով տեսանյութ:

Ժողովուրդ օրաթերթի տեղեկությամբ՝ ծրագրի նպատակով պետբյուջեից հատկացվել է 1 մլրդ 192,5 մլն դրամ:

Ընդհանուր առմամբ, 2018-2022 թվականների ընթացքում Արարատի մարզում հիմնանորոգվել է 94 կմ ճանապարհ:3-ի ընթացքում նախատեսվում է

ԲԱՆԱԿԻ ՔԵՖ

20-ԱՄՅԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեզ մանրամասներ են հայտնի դարձել Բյուրեղավանում տեղի ունեցած սպանությունից. մասնավորապես՝ իրավապահները ձերբակալել են ենթադրյալ սպանություն կատարողին, որը եղել է Միեր Թ.-ն, նա ձերբակալված է: Բյուրեղավանի բնակիչները, որոնց անունները հարգելի պատճառներով չենք ներկայացնում, պատմեցին, որ լուրեր ունեն, թե միջադեպի մասնակից տղաների միջև միջադեպը սկսվել է տաքսի պատվիրելու հարցի շուրջ: Բանն այն է, որ սպանության մեջ կասկածվող Միեր Թ-ն տաքսի է վարում, եւ Բյուրաղեվանի բնակիչներ Արթուրը, Գոռը, Արտուշը եւ Կարենը տաքսի մեքենա են պատվիրել: Պատվիրելու հարցն էլ դարձել է տղաների միջեւ կոնֆլիկտի պատճառ:

Եվ այսպես, ամեն ինչ մասին՝ ամենասկզբից.

Միջադեպի մասնակից 20-ամյա Կարենն այդ օրը բանակից տուն է եկել, ու տղաներով հավաքվել են նշելու նրա՝բանակից վերադառնալու առիթը: Պատվիրել են տաքսի, ու նրանց է սպասարկել տաքսու վարորդ Միերը, տղաներին տարել է իրենց ցանկալի ռեստորանը՝ քեֆ անելու: Բյուրեղավանի բնակիչներ Արթուրը, Գոռը, Արտուշը եւ Կարենը մի լավ քեֆ են անում եւ զանգահարում են իրենց ռեստորան հասցրած տաքսու վարորդ Միերին եւ ասում են, որ գա, հիմա էլ իրենց տանի տուն: Միերը հրաժարվում է պատվերը ընդունել՝ասելով, որ չի կարող իրենց տանել, քանի որ հիմա այլ հաճախորդի է սպասարկում: Գինովցած տղաները հայհոյում են տաքսու վարորդին, ու խոսակցությունն այնքան է թեժանում, որ որոշում են հանդիպել: Արդյունքում տաքսու վարորդ Միերն իր ընկերոջ հետ, որը ունեցել է առողջական խնդիրներ, գնում է Բյուրեղավանի տղաների հետ հանդիպման, ու հանդիպումը վերածվում է կռվի, որից հետո, ըստ նախնական վարկածի, Միերը դանակով հարվածներ է հասցնում տղաներին. հարվածից՝ բանակից վերադարձած Կարենը, որը տոնում էր իր բանակի քեֆը, տեղում մահանում է, իսկ 3 անձի տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխում են հիվանդանոց:

Ըստ Քննչական կոմիտեի՝դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով եւ 167-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննության իրականացումը հանձնարարվել է քննչական խմբին: Հինգ անձ ճանաչվել է տուժող:

Իրականացված անհետաձգելի միջոցառումների արդյունքում պարզվել է առերեւույթ հանցագործություն կատարած անձի ինքնությունը, որը հանդիսանում է Բյուրեղավան քաղաքի բնակիչ՝ ծնված 1991թ.: Վերջինս դեպքից ժամեր անց հայտնաբերվել է, սպանություն կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալվել, ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին եւ հարցաքննվել՝ տալով ինքնախոստովանական ցուցմունք:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Արսեն Հենրիկի Մովսեսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա շահադիտական նպատակով, Երեւան քաղաքի Կիեւյան 12 հասցեում գործող «Իսկուհի թրավել» տուրիստական կազմակերպության տնօրեն Իսկուհի Սուրենի Ղուբասարյանի հետ նախնական համաձայնությամբ, վերջինիս հետ գործելով խմբի կազմում, «Շենգենյան համաձայնության» երկրների մուտքի կեղծ վիզայով օտարերկրյա քաղաքացի Ժանեթ Առաքելի Սարգիսյանի անօրինական միգրացիան՝ ՀՀ-ից ելքը եւ Ֆրանսիայի Հանրապետություն մուտքը կազմակերպելու դիտավորությամբ 2016 թվականի դեկտեմբերից մինչեւ 2017 թվականի օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում Ժանեթ Սարգիսյանից պահանջել եւ մաս-մաս ստացել են ընդհանուրը 3.309.800 ՀՀ դրամին համարժեք 6.500 եվրո կանխիկ գումար, ինչպես նաեւ վերջինիս Սիրիայի քաղաքացու 008560330 համարի անձնագիրը:

Դրանից հետո, նախնական համաձայնությամբ, «Շենգենյան համաձայնության» երկրների մուտքի թույլտվություն ստանալու նպատակով Արսեն Մովսեսյանն Իսկուհի Ղուբասարյանից որպես «ծառայության մատուցում», այն է՝ կեղծ վիզան բերելու եւ այն Իսկուհի Ղուբասարյանին իրացնելու նպատակով վերցրել է նախապես պահանջված 1.000 ԱՄՆ դոլլար գումարը եւ վերը նշված անձնագիրը, որը քննությամբ չպարզված անձի միջոցով կեղծել եւ 2017 թվականի հունվար ամսվա վերջերին, Արսեն Մովսեսյանն Իսկուհի Ղուբասարյանին է հանձնել Ժանեթ Սարգիսյանի 008560330 համարի անձնագիրը, որի 9-րդ էջում փակցված է եղել ԱՄԷ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանատան կողմից տրված՝ «Շենգենյան համաձայնության» երկրներ մուտքի թույլտվության թիվ 533196224 վիզան, սակայն հանցագործությունը նրանց կամքից անկախ հանգամանքներում ավարտին հասցնել չեն կարողացել, քանի պարզվել է արտոնագրի կեղծ լինելու հանգամանքը, եւ այդ մասին հաղորդվել է իրավապահ մարմիններին:

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԴԵՂԱՏՆԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Աննա Արզումանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա կատարել է ուրիշի գույքի մանր չափով գողություն՝ գաղտնի հափշտակություն: Այսպես, 2023 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, Աննա Հենրիի Արզումանյանը, որպես հաճախորդ գտնվելով Երեւան քաղաքի Տիգրան Մեծ փողոցի 33ա հասեցում գործող «Ալֆա ֆարմ» ՓԲ ընկերության 112 համարի դեղատանը, օգտվելով դեղատան աշխատակցի զբաղված լինելու հանգամանքից, դեղատան բաց դարակաշարի վրայից գաղտնի հափշտակել է «Ալֆա ֆարմ» ՓԲ ընկերությանը պատկանող 23.000 ՀՀ դրամ արժողությամբ «Լյա Ռոշ Պոզե» բրենդի էֆֆակլար շարքի շիճուկը՝ ընկերությանը պատճառելով մանր չափի գույքային վնաս:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

ԿԱՏԱՐԵԼ Է ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Մարինե Ամիրխանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի հուլիսի 1-ին՝ ժամը 00:40-ի սահմաններում, ՀՀ ՊԵԿ Արեւելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի խորը զննման անգարում, այնուհետեւ անգարի դիմացի հատվածում կատարել է խուլիգանություն, նա շուրջ 10 րոպե բարձրաձայն հայհոյանքներ ու անպարկեշտ արտահայտություններ է հնչեցրել ՀՀ ՊԵԿ Արեւելյան մաքսատուն-վարչություն Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի պետի տեղակալի պարտականությունների ժամանակավոր կատարող Սարմեն Հարությունյանի հասցեին՝ ստորացնելով նրան, այնուհետեւ ձեռքով հարվածել վերջինիս եւ պատճառել ֆիզիկական ցավ, թքել Սարմեն Հարությունյանի ուղղությամբ, հագից հանել իր զույգ կոշիկներն ու նետել Սարմեն Հարությունյանի ուղղությամբ:

ԼՔԵՑ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ՀՀ նախկին գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի դեմ հարուցված քրեական գործով Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչ Վոլոդյա Սիմոնյանն ազատման դիմում է գրել ու հեռացել կոմիտեից: Իսկ թե կոնկրետ ինչն է պատճառը, մեզ առայժմ պարզել չի հաջողվել, սակայն փաստ է, որ նա լքել է Հակակոռուպցիոն կոմիտեն:

Հիշեցնենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ հիմնավորվել էր, որ Աղվան Հովսեփյանը ստացել էր առանձնապես խոշոր չափերով՝ 190.000.000 ՀՀ դրամ կաշառք եւ խարդախության եղանակով կատարել առանձնապես խոշոր չափերով՝ 800.000.000 ՀՀ դրամ գույքի հափշտակություն: Հովսեփյանին մեղադրանք էր առաջադրվել նաեւ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 1.299.404.414 ՀՀ դրամ գույքը (փողերի լվացում) օրինականացնելու համար:

Հաղորդագրության մեջ նաեւ ասվում էր, որ Աղվան Հովսեփյանը, 2004 թվականի մարտի 18-ից մինչեւ 2013 թվականի սեպտեմբերի 13-ը զբաղեցնելով ՀՀ գլխավոր դատախազի, իսկ 2014 թվականի հուլիսի 18-ից մինչեւ 2018 թվականի հունիսի 11-ը՝ՀՀ քննչական կոմիտեի նախագահի պաշտոնները, հիշյալ ժամանակահատվածում փաստացի մասնակցել է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մի շարք ՍՊ ընկերությունների կառավարմանը: Վերը նշված հանցավոր արարքների կատարման համար Աղվան Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (3 դրվագ):

Աղվան Հովսեփյանը ձերբակալվել է 2021 թվականի սեպտեմբերի 7-ին, այնուհետեւ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հուլիսի 14-ից 17-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 128 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐՔ

ՆԱԽԱԳԱՀԸ ԴՐՎԱՏԵԼ Է

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը հուլիսի 13-ին աշխատանքային այց է կատարել Տավուշի մարզ, որի ընթացքում Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի եւ Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի ուղեկցությամբ այցելել է Նոյեմբերյանի բժշկական կենտրոն, որտեղ «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրեն Հայկակ Արշամյանը եւ հիվանդանոցի տնօրեն Գարունիկ Ղուշչյանը ներկայացրել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կառուցվող նոր՝ ինֆեկցիոն մասնաշենքը:

Նախագահն այցելել է նաեւ Լուսաձոր գյուղում գտնվող, Ֆրանսիայի համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ կառուցված անասնապահական ֆերմա եւ պանրի արտադրամաս: Այդտեղ նախագահ Վահագն Խաչատուրյանին դիմավորել է ֆերմայի տնօրեն Սուրեն Գեւորգյանը:

Անասնաֆերմայի եւ պանրագործարանի տարածքում կատարած շրջայցից հետո հանրապետության նախագահը մեծապես կարեւորել է այն գործը, որն այդտեղ իրականացվում է: Ուշագրավ է, որ ճանապարհորդի համբավ ունեցող նախագահը այցելել է այն ընկերություն, որը բացահայտ խախտում է ՀՀ օրենքը, համահայկական փողերով ստեղծված ձեռնարկության՝ Լուսաձորի պանրագործարանի արտադրանքի վրա հայերեն ոչ մի գրառում չկա:

Իջեւան քաղաքի կենտրոնում, «ԷկոՏավուշ» ՍՊԸ-ի ֆիրմային խանութում վաճառվող հալած յուղի տուփի վրա հայերեն ոչ մի գրառում չկա, բոլոր գրառումները ռուսերեն են, բացի ընկերության անվան լատինատառ գրառումից:

Սա օրենքի կոպիտ խախտում է, քանզի Հայաստանում արտադրվող, վաճառվող արտադրանքը պետք է ունենա ապրանքի վերաբերյալ հայերեն տեղեկատվություն: Հալած յուղն արտադրվում է Իջեւան համայնքի Լուսաձոր գյուղում գործող «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի պանրագործարանում: Նույն խանութում վաճառվող, «ԷկոՏավուշի» արտադրած պանրի հատիկների փաթեթի հակառակ երեսին հայերեն գրառումն այնքան փոքր չափի տառերով է, որ խոշորացույցով է հնարավոր այն կարդալ:

«ԷկոՏավուշ» ընկերությունը Տավուշի մարզի Լուսաձոր գյուղի պանրագործարանում արտադրված պանրի հիմնական մասն արտահանում է Ռուսաստանի Դաշնություն:

«ԷկոՏավուշ» ՍՊԸ-ի տնօրենը Հասմիկ Գեւորգյանն է, այդ ընկերությունը ստեղծվել է «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի կողմից, որի տնօրենը Ֆրանսիայի համահայկական հիմնադրամի տնօրեն Սուրեն Գեւորգյանն է: Հասմիկ Գեւորգյանը Սուրեն Գեւորգյանի կինն է: Ամուսիններով փոխկապակցված ընկերությունների տնօրեններ լինելը պարունակում է կոռուպցիոն լուրջ ռիսկեր:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՈՒՐԻՇԻ ՏԱՆԸ՝ ՈՒՐԻՇԻ ՄԵՔԵՆԱՅՈՎ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Էդգար Հակոբյանը հայտարարատու տարում ներկայացված հայտարարագրում չունի ոչ մի սեփական անշարժ կամ շարժական գույք: Ըստ հայտարարագրի՝ նա բնակվում է մեկ ուրիշի տանը, շահագործում է փաստացի այլ անձին պատկանող հողամասը եւ հասարակական նշանակություն ունեցող շինությունը:

Ըստ հայտարարագրի անշարժ գույքի հայտարարագրման բաժնում ներկայացված տվյալների՝ պատգամավորը չունի սեփական աշարժ գույք, այսինքն՝ երկու բնակարանը, մեկ հողամասը եւ մեկ հասրակական նշանակության շինությունը պատկանում են այլ անձի, սակայն շահագործվում է պատգամավորի եւ նրա ընտանիքի կողմից:

Հակոբյանը նույնկերպ հայտարարագրել է մեկ բնակարան, 2013 թվականի արտադրության Toyota մակնիշի մեքենա, որը, ըստ նշված տվյալի, փաստացի պատկանում է այլ անձի, սակայն շահագործվում է պատգամավորի կողմից:

Էլեկտրոնային հաշիվները եւ կրիպտոարժույթները նվազել են. տարեսկզբին դրանք կազմում էին 364 հազար դրամ, իսկ տարեվերջին՝ 7 հազար դրամ:

Պատգամավորի կանխիկ դրամական միջոցներն ավելացել են՝ 364 հազար դրամից դառնալով 7 մլն դրամ:

Պատգամավորի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 7 մլն 956 հազար դրամ, որից 7 մլն 480 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ԱԺ աշխատակազմի կողմից, իսկ ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4 մլն դրամ:

Նա հանդիսանում է նաեւ երկու կազմակերպությունների հիմնադիր՝ «ԱՐՔԱՅՈՐԴԻ» ՍՊԸ եւ «ՆՈՅ ՏՐԱՆՍ», որտեղ իր անչափահաս որդիները եւս մասնաբաժին ունեն: Ըստ տեղեկությունների՝ Էդգար Հակոբյանը, որը հանդիսանում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ՔՊԿ տարածքային կառույցի խորհրդի նախագահ, Աննա Հակոբյանի հետ ազգակցական կապ ունի:

Ժամանակին ՔՊ-ն մեղադրում էր նախկիններին, որ իրենց բարեկամներին բարձր պաշտոններ են տվել, եւ համակարգը քավոր-սանիկական հարաբերություններով է աշխատում, սակայն այսօր ԱԺ ծառայողականի վարորդներից մինչեւ ԱԺ պատգամավորներ ՔՊ-ականների բարեկամներն են: Դիցուք՝ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանի ազգականների՝ ԱԺ-ում հայտնվելուն բազմիցս ենք անդրադարձել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՏՎՅԱԼՆԵՐ

ԹԱԳՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Թագուհի Ղազարյանը 2022 թվականի հայտարարտու տարում ձեռք է բերել հիպոտեկով բնակարան Երեւան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերից մեկում, որն արժե 27 մլն 750 հազար դրամ: Բնակարանը ձեռք է բերել «ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ից միանձնյա սեփականության իրավունքով: Ղազարյանն այդ բնակարանը հայտարարգրել է որպես չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույք:

Հանձնված եւ վերադարձված փոխառությունները հայտարարտու տարվա տարեվերջին կազմել են 10 մլն 175 հազար դրամ, բանկային հաշիվների մնացորդները տարեվերջին կազմել են 1 մլն 895 հազար դրամ: Պատգամավորի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 8 մլն 265 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 17 մլն 325 հազար դրամ, որը հիպոտեկով բնակարանի գումարի մնացած մասն է:

Ղազարյանն այն եզակի պատգամավորներից է, որը, մեծ ունեցվածք ունենալու հետ մեկտեղ, հայտարարագրել է նաեւ միանվագ 2 մլն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող այլ ծախսեր՝ 2 մլն 750 հազար դրամ:

Այսպիսով, անտուն ՔՊ-ականները իշխանություն գալուց հետո մեքենաներ եւ բնակարաններ են գնում, ապա մեղադրում նախկիններին երկու-երեք բնակարան ունենալու համար:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄՆԱԴԻ ԳՆԵՐԸ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախում հումանիտար վիճակը գնալով ավելի է ծանրանում, խանութների մեծ մասը փակվել են վաճառելու ոչինչ չունենալու պատճառով:«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի Ազգային ժողովի պատգամավոր Մետաքսե Հակոբյանը մանրամասներ է ներկայացրել տիրող իրավիճակի մասին:

«Արցախում չի կարող իրավիճակը դրական փոփոխություն ունենալ, իրավիճակը նույնիսկ րոպեների ընթացքում կարող է փոխվել դեպի ավելի վատը: Արցախում արդեն խանութների մեծ մասը փակ է, մեքենաներն անգամ հաց չեն կարող տանել խանութներ վառելիք չունենալու պատճառով: Քար լռություն է Ստեփանակերտում, նույնիսկ շարժ չկա, ուղղակի բառեր չկան բնութագրելու այս ծայրահեղ իրավիճակը: Մարդկանց մոտ շատ մեծ անհանգստություն է, լարվածությունը նույնիսկ օդի մեջ է կախված:

Բազմաթիվ մարդիկ կան, որ հենց այս պահին էլ ոչինչ չունեն ուտելու, եւ դու չգիտես՝ արդեն քո եղած մի փոքրիկ բանը ում հետ կիսել: Արցախում ուղղակի գնելու ոչինչ չկա, բացառությամբ մի քանի տեսակի միրգ-բանջարեղենի, որոնք աստղաբաշխական գների են, եւ մարդիկ նույնիսկ ռիսկ չեն անում մոտենալ դրանց: Օրինակ՝ լոլիկն արժե 2300-2500 դրամ, սմբուկը, եթե իհարկե լինում է, 2000 դրամ, վարունգը՝1400-1500 դրամ եւ այլն:

Միրգ եւս չկա, մարդիկ բերքահավաքի խնդիր էլ ունեն. Ադրբեջանը թույլ չի տալիս, թիրախավորում են, հավաքելու դեպքում էլ տեղափոխելու խնդիր կա, քաղաք չեն կարող բերել, որպեսզի իրացնեն»:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 50 ՃՏՊ. 67 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՑԱՆՑԸ ԿԲԱՐԵԼԱՎՎԻ

Երեւանի Գարեգին Նժդեհ փողոցում նախատեսվում է առանձնացնել ավտոբուսային գծեր: Քաղաքապետարանի գործակարգավարական նիստում այս մասին հայտնեց Երեւանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Վազգեն Հարությունյանը:

«Հասարակական տրանսպորտի համար առանձնացված նոր երթեւեկելի գոտիների ներդրմամբ աշխատանքների շրջանակում ներկայումս իրականացվում են Գարեգին Նժդեհ փողոցի երթեւեկության կազմակերպման փոփոխության սխեմաների մշակման աշխատանքներ, որը նախատեսում է նշված փողոցում առանձնացված ավտոբուսային գծի ներդրում»,-ասաց Հարությունյանը:

Գարեգին Նժդեհ փողոցի ընտրությունը նա պայմանավորեց նշված հատվածով թվով 21 հասարակական տրանսպորտի երթուղիների սպասարկմամբ, երթուղիների ինտենսիվությամբ: Առաջիկա շաբաթների ընթացքում կհրապարակվեն Գարեգին Նժդեհ փողոցի երթեւեկության կազմակերպման փոփոխության նոր սխեմաները, կսկսեն իրականացվել գծանշման աշխատանքները, ինչպես նաեւ կահավորումը՝համապատասխան ճանապարհային նշաններով:

«Այս փոփոխությունը հնարավորություն կտա հասարակական տրանսպորտից օգտվողներին խուսափել նշված փողոցի տրանսպորտային հոսքերի խցանումներից եւ կնվազեցնի ուղեւորության միջին տեւողությունը տվյալ փողոցը սպասարկող երթուղիների համար»,-ասաց Հարությունյանը:

Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանն էլ հիշեցրեց՝ինչպես խոստացել էին՝ տրանսպորտային բարեփոխման կարեւորագույն մաս են ավտոբուսային առանձնացված գծերը, որով հասարակական տրանսպորտին տալիս են առավելություն՝ մարդատար մյուս ավտոմեքենաների նկատմամբ:

«Դա, իհարկե, որոշ անհարմարություններ պատճառում է ավտոմեքենա վարողներին: Այնուամենայնիվ, սա է այն ճանապարհը, որով պետք է հասարակական տրանսպորտը զարգանա եւ որակապես, եւ ժամանակային առումով: Տրանսպորտը պետք է լինի Երեւան քաղաքով ամենաարագ տեղաշարժվողը: Հուսով եմ՝շատ շատերս վաղ թե ուշ մեր ավտոմեքենաներից տեղափոխվելու ենք դեպի հարամարվետ եւ առանձնացված գծերով երթեւեկող, օնլայն վճարելու հնարավորություն տվող ավտոբուսներ»,-ասաց փոխքաղաքապետը:

ԲՈՒՀԵՐ

ԿՀՐԱՊԱՐԱԿՎԵՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում տեղի է ունեցել հանրապետական ընդունող հանձնաժողովի նիստը՝ նախարար Ժաննա Անդրեասյանի գլխավորությամբ: ԿԳՄՍ նախարարության հաղորդմամբ՝ նիստին մասնակցել են նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, բուհերի ռեկտորներ, Գնահատման եւ թեստավորման կենտրոնի ներկայացուցիչներ:

ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ հաստատելով օրակարգը՝ ընդունող հանձնաժողովը քննարկել եւ հաստատել է ՀՀ պետական եւ ոչ պետական բուհերի առկա ուսուցման 2023-2024 ուստարվա ընդունելության հիմնական փուլի արդյունքները՝ բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով:

Գնահատման եւ թեստավորման կենտրոնն ընդունելության քննությունների արդյունքները կհրապարակի հուլիսի 18-ին: Ընդունելության հիմնական փուլի նախնական արդյունքները ներկայացրել է Գնահատման եւ թեստավորման կենտրոնի տնօրեն Արմեն Փաշայանը:

Ինչպես հայտնի է, 2023/2024 ուստարվա դիմորդները հնարավորություն են ունեցել ընդունելության միասնական քննություններ հանձնել 2 անգամ՝համաձայն ՀՀ կառավարության 597-Ն որոշմամբ սահմանված կարգի: Ըստ այդմ՝ միասնական քննությունների առաջին փուլը կազմակերպվել է հունվարին, իսկ երկրորդ փուլի քննություններն անցկացվել են հունիսի 1-ից հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում: Դիմորդները հանձնել են առավելագույնը երկու միասնական քննություն:

Արմեն Փաշայանը տեղեկացրել է, որ բուհերին տրամադրված 2128 անվճար տեղերից համալրվել է 1778-ը, իսկ 15984 վճարովի տեղերից՝7220-ը:

«Քննական գործընթացը բավական հանգիստ է անցել: Դրա մասին է փաստում բողոքարկումների սակավությունը. առաջին եւ երկրորդ փուլերի արդյունքներով ունեցել ենք ընդամենը 252 բողոքարկում, որից ավելի քան 180-ը վերաբերել է ընթացակարգային, տեխնիկական հարցերին: 15 հոգու պարագայում, ընդունող հանձնաժողովի որոշմամբ, գնահատականի փոփոխություն է տեղի ունեցել: Ինչ վերաբերում է քննական գործընթացը երկու փուլով կազմակերպելուն, նշեմ, որ բազմաթիվ դիմորդներ երկրորդ փուլում միայն մեկ առարկայի քննություն են հանձնել՝ պահպանելով իրենց գնահատականը»,- ասել է Արմեն Փաշայանը:

Անդրադառնալով պահուստային եւ թափուր տեղերի վերաբաշխման հարցին՝ նիստի մասնակիցները որոշել են քննարկումները ծավալել միասնական քննությունների լրացուցիչ փուլի արդյունքների ամփոփումից հետո:

Նիստի ընթացքում քննարկվել են ընդունելության քննություններին առնչվող այլ հարցեր:

ԿԳՄՍ նախարարն առաջարկել է քննարկել բուհերին հատկացվող տեղերի ընդհանուր մոտեցումը վերանայելու հարցը՝ բուհին տալով ավելի մեծ ազատություն վճարովի տեղերն օգտագործելու առումով: Ժաննա Անդրեասյանի դիտարկմամբ՝ պետությունը պետք է վերահսկի միայն բյուջետային միջոցներից ֆինանսավորվող տեղերը՝ բուհին վերապահելով գործունեության ազատություն՝ ակադեմիական ազատության շրջանակում:

Բուհերի ռեկտորների հետ հանդիպման ընթացքում Ժաննա Անդրեասյանն անդրադարձ է կատարել նաեւ նոր կազմավորվող Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեին, Ակադեմիական քաղաքի ծրագրին: Քննարկման ընթացքում անդրադարձ է եղել նաեւ ՀՀ պետական բուհերի խոշորացման եւ գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացին՝ կարեւորելով ոլորտի ներկայացուցիչների մասնակցայնությունը հայեցակարգի մշակմանը:

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՍՐՎԵԼ Է

Երեւանի որոշ վարչական շրջաններում աղբահանության խնդիրը սրվել է, առկա են աղբահանության տեխնիկայի հետ կապված խնդիրներ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական նիստում այս մասին խոսեցին քաղաքային իշխանության ներկայացուցիչները:

«Մենք ունենք որոշակի խնդիրներ՝ աղբահանության տեխնիկայի հետ կապված: Կարծում եմ՝ առաջին հերթին պետք է խոսենք այդ խնդիրների մասին, նաեւ երեւանցիներին որոշակի ժամանակացույց ասենք, թե որ տեխնիկան ինչ ժամկետում է լինելու, որովհետեւ կան վարչական շրջաններ, որտեղ աղբահանության հետ խնդիրներ ունենք այս պահի դրությամբ»,-ասաց փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը՝ կարեւորելով, որ քաղաքացիներն իմանան պատճառը:

Երեւանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանն էլ ներկայացրեց 3 օր անընդմեջ իրականացրած շրջայցի արդյունքները:

«Որոշ վարչական շրջաններում ու թաղամասերում սրվել է աղբահանության խնդիրը, խախտվել է ժամանակացույցը, կա աղբամանների գերբեռնվածություն եւ կուտակումներ»,-ասաց Արեյանը:

Նա վստահեցրեց՝ ամեն ինչ արել են այս 3 օրերի ընթացքում, որ թույլ չտան՝խնդիրը խորանա: «Այս պահին էլ դեռեւս վիճակը բարվոք չէ, բայց հիմնական պատճառը տեխնիկան է»,- հավելեց Արեյանը:

Նա ասաց՝ անձամբ է եղել պարկում. այն, ինչ նկատելի է, առանձին քննարկման առարկա է: «Պատճառները տարբեր են, մտահոգությունը՝ մեկը, որ այդ հիմնարկում պետք է խստացվի տեխնիկայի մասնագիտական շահագործման նկատմամբ հսկողությունը, ամենօրյա սպասարկումը: Դա վերաբերում է նաեւ ձնամաքրման տեխնիկային, աղբատարներին, փոշեկուլներին»,-նշեց նա:

Քաղաքապետի խորհրդականի հավաստմամբ՝ տնօրենի հետ պայմանավորվել են, որ հուլիսի 17-ից կներկայացվի յուրաքանչյուր անսարք մեքենայի վերականգնման ժամկետը, որ կարողանան լիարժեք շարժակազմով սպասարկել քաղաքը: Արեյանը շեշտեց՝ ամեն ինչ պետք է անեն՝ ժամ առաջ կանխելու այս երեւույթը:

Ավինյանն էլ հավելեց՝ առանձին քննարկում պետք է ունենան այդ թեմայով: Նա նշեց՝ այն տեխնիկան, որ ձեռք էր բերվել, ենթադրվում է, որ առնվազն 10 տարի պետք է ծառայեր: Եվ փչանալու ցուցանիշը շատ մեծ մտահոգությունների տեղիք է տալիս: Փոխքաղաքապետը տեղեկացրեց նաեւ, որ կա 4 հավելյալ մեքենա, որոնք ճանապարհին են, Հայաստան հասնելուն պես դուրս կգան փողոցներ: Ավինյանը հավելեց՝ առկա դժվարությունները վստահաբար ինչ-որ ժամանակում կլուծեն, սակայն սա ահազանգ է նրա մասին, որ այս տեխնիկայով հեռու չեն գնալու: Այս թեմայով քաղաքապետարանում քննարկում կունենան՝ մշակելու հետագա զարգացման պլան:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՍՊՈՐՏԻ ԵՏՆԱԲԵՄԻՑ

ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄՆ ՈՒ ՍՊՈՐՏԸ

«Ժողովուրդ» օրաթերթը «Սպորտի ետնաբեմից» խորագրով շարքի շրջանակներում շարունակում է բացահայտել մարզիկներին: Այս անգամ մեզ հյուրընկալվել էր King Արթուրը կամ բոլորին հայտնի Արթուր Աբրահամը:

Աշխարհի կրկնակի չեմպիոնը պատմել է մանրամասներ առաջին տպավորությունների, իր առջեւ ծառացած դժվարությունների, ինտրիգային պատմությունների, հայկական բռնցքամարտի զարգացվածության, ներկայիս զբաղմունքների ու հետագա անելիքների մասին:

- Եկեք սկսենք ամենասկզբից. Ավետիք Աբրահամյանը մարզիկի իր կարիերան սկսեց հեծանվասպորտից՝ ավելի ուշ նախապատվությունը տալով բռնցքամարտին: Ինքներդ էլ տարիներ առաջ խոստովանեցիք, որ հեծանվասպորտում միջին մարզիկ էիք, իսկ միջիններ շատ կան. պետք է տարբերվել ու լինել յուրահատուկ եւ, որ ամենակարեւորն է, պետք է մտնել թոփ 10-ի մեջ: Ե՞րբ հասկացաք, որ ունեք պոտենցիալ՝ հայտնվելու թոփ 10-ի մեջ արդեն բռնցքամարտում:

-Ես հեծանվասպորտով զբաղվել եմ 10-11 տարեկանից, քանի որ իմ քեռին՝ Կարապետ Կարագաշյանը, եղել է շատ ուժեղ հեծանվասպորտից: Չնայած սրան՝ ես չեմ ունեցել հեծանիվ: Պատճառն այն էր՝ մենք ապրում էին բանուկ փողոցի վրա, եւ իմ ծնողները մեզ հեծանիվ չէին գնում, եւ ես այժմ հասկանում եմ, որ, այո, նրանք ճիշտ էին, որովհետեւ շատ վտանգավոր էր՝ արագընթաց մեքենաների անընդհատ հոսք կար: Երազանքս էր հեծանիվ ունենալը, հեծանիվ քշելը, եւ այդ երազանքս աճեց՝ հասնելով նրան, որ ես ցանկանում էի լավ մարզիկ լինել հեծանվասպորտում, ինչպես մորեղբայրս էր: Հեծանվասպորտում ես եւս հաջողություններ գրանցել եմ. 1-ին տեղ եմ բազմիցս գրավել, 2-րդ եւ 3-րդ հորիզոնականներում էլ եմ շատ եղել, բայց ես զգացի, որ միջին կարգի մարզիկ եմ այս սպորտաձեւում, որովհետեւ բնությունը ինձ չի տվել այն հնարավորությունը, որ ես կարողանամ շատ արագ բարձր սարեր բարձրանալ. քաշս թեթեւ չէր: Քաշի հետ է կապված, թե ինչքան արագ կվարես հեծանիվը: Այո՛, կլինես մարզիկ, ով զբաղվում է հեծանվասպորտով, բայց չես լինի լավագույնը, իսկ ինձ համար միջին չկա: Ես սիրում եմ կամ լավ, կամ վատ. եթե մի բան ես զգում եմ, որ միջին որակի է, ուրեմն իմը չէ:

-Իսկ միգուցե եթե հեծանվասպորտն էլ շարունակեիք, այնտեղ էլ կգրանցեիք հաջողություն այնպես, ինչպես բռնցքամարտում, կամ գուցեեւ ավելիին հասնեիք. չէ՞ որ, ինչպես ասում են, Մոսկվան մեկ օրում չի կառուցվել:

-Հնարավոր չէր. ես իմ վրա դա զգում էի: Ցանկացած մարզիկ զգում է՝ դա իրենն է, թե ոչ, կամ թե ինքը ինչ կարգի մարզիկ է այդ սպորտաձեւում:

-Անցումը հեծանվասպորտից բռնցքամարտին ինչպե՞ս տրվեց: Ինչպե՞ս այս պայքարում հաղթեց բռնցքամարտը:

-Ես միշտ նայում էի Մայք Թայսոնի մարտերը, ու ինձ դա գրավում էր: Բռնցքամարտում դու մենակ ես, ու քո հույսը միայն դու ես: Այլ սպորտաձեւերում՝ ֆուտբոլում, հեծանվասպորտում, եթե քեզ թիմդ չօգնեց, առաջ գնալ ու հաղթել չես կարող: Եվ բռնցքամարտի մեջ հենց դա գրավեց, որ դու մենակ ես, ու քո միակ հույսը դու ես. լավ է, վատ է, դա է:

Հարցազրույցն ամբողջությամբ՝ Armlur.am կայքում

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ԻՎՈՒՆ ՀԵՌԱՆՈՒՄ Է

Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Ուգոչուկվու Իվուն Կազանի «Ռուբին» տեղափոխությունից հետո հրաժեշտի խոսք է ասել «Ուրարտու» ֆուտբոլային ակումբի երկրպագուներին եւ աշխատակիցներին:

«Հրաշալի տարիներից հետո հեռանում եմ «Ուրարտուից»: Շնորհակալ եմ ակումբի ղեկավարությանը, մարզիչներին, թիմակիցներիս, եւ, իհարկե, երկրպագուներին: Շնորհակալ եմ ինձ ձեր մեծ ընտանիքի անդամ դարձնելու համար: Ես ինձ միշտ զգացել եմ, ինչպես տանը:

Հաճույք եւ պատիվ է խաղալ այս մեծ ակումբում եւ հաղթել Հայաստանի Պրեմիեր լիգայում, Հայաստանի գավաթում եւ մի քանի եվրոպական ակումբային հանդիպումներ անցկացնել: Ինձ հետ տանում եմ հիանալի ու անմոռանալի հիշողություններ:

Շատ հուզված եմ եւ սպասում եմ նոր փուլի: Շնորհակալություն եւ հաջողություն եմ մաղթում հետագայում»,- Իվուի խոսքը մեջբերում է «Ուրարտուի» կայքը: Իվուն «Ուրարտուի» կազմում անցկացրել է 3 տարի: Անցած մրցաշրջանում նա երեւանյան թիմի հետ դարձել է Հայաստանի չեմպիոն եւ գավաթակիր:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ՝ ՄԱԴՐԻԴԻ «ՌԵԱԼ»-ԻՑ

Իսպանիայի փոխչեմպիոն Մադրիդի «Ռեալը» շնորհավորել է աշխարհի առաջին ռակետ, իսպանացի Կառլոս Ալկարասին Ուիմբլդոնի մրցաշարի տիտղոսը նվաճելու առթիվ: Եզրափակիչում 20-ամյա թենիսիստը 1:6, 7:6 (8:6), 6:1, 3:6, 6:4 հաշվով պարտության էր մատնել Ուիմբլդոնի մրցաշարի 7-ակի հաղթող, աշխարհի երկրորդ ռակետ, 36-ամյա սերբ Նովակ Ջոկովիչին:

«Շնորհավորում ենք Ուիմբլդոնում տարած փայլուն հաղթանակի առթիվ, թանկագին Կառլոս Ալկարաս: Շնորհավորում ենք համաշխարհային թենիսում առաջին ռակետի դիրքը պահպանելու առթիվ: Դու հպարտություն ես իսպանական սպորտի եւ «Ռեալի» բոլոր երկրպագուների համար»,- նշվում է Արքայական ակումբի շնորհավորական հաղորդագրությունում:

Ալկարասը երկրորդ տիտղոսը նվաճեց «Մեծ սաղավարտի» մրցաշարերում: Անցած տարի նա դարձել էր ԱՄՆ-ի բաց առաջնության չեմպիոն, ինչի շնորհիվ գլխավորել էր համաշխարհային դասակարգման աղյուսակը:

ՄԵԴԱԼՆԵՐ՝ ՇԱԽՄԱՏԻՍՏՆԵՐԻՑ

Ավարտվել է «7th International Chess Festival - Batumi Municipality Cup» միջազգային մրցաշարը:

ՀՀ շախմատի ֆեդերացիայից հայտնում են, որ հայ շախմատիստներից մրցանակային տեղեր են զբաղեցրել հետեւյալ շախմատիստները՝

«Ա» մրցաշար
3-րդ տեղ՝ Վահե Դանիելյան,
4-րդ տեղ՝ Էրիկ Հակոբյան,
5-րդ տեղ՝ Բենիկ Ագասարով,
7-րդ տեղ՝ Էրիկ Գասպարյան:

ԳՐԱՆ ՊՐԻ

ՄԱՇԱ ՄՆՋՈՅԱՆԸ ՀԱՂԹԵՑ

Բելառուսի Հանրապետության Վիտեբսկ քաղաքում հուլիսի 14-16-ը կայացել է «Սլավյանսկի բազար 2023» երիտասարդ կատարողների 32-րդ ամենամյա միջազգային մրցույթը, որտեղ այս տարի մասնակցում էր 15 երկիր: Հեղինակավոր այս մրցույթում Հայաստանը ներկայացրել է երգչուհի Մաշա Մնջոյանը, որը մրցութային երկու օրերին իր կատարողականությամբ ու բեմական կեցվածքով փայլել է հեղինակավոր մրցույթի բեմում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մրցութային առաջին օրը Մաշան կատարել է Եվգենի Կրիլատովի երաժշտությամբ եւ Իգոր Վոզնեսենսկիյի խոսքերով գրված «Խոստացի՛ր ինձ սեր» երգը՝ արժանանալով ժյուրիի 66 միավորին: Երկրորդ մրցութային օրը, որպես միջազգային հիթ, կատարել է Արետա Ֆրանկլինի Respect ստեղծագործությունը՝ արժանանալով 69 միավորի:

Արդյունքում Մաշան մրցութային օրերին վաստակել է 135 միավոր՝ դառնալով հեղինակավոր մրցույթի բացարձակ հաղթող ու արժանանալով Գրան պրի մրցանակի: Հայաստանն առաջին անգամ է հաղթող ճանաչվել «Սլավյանսկի բազար» երիտասարդ կատարողների մրցույթում:

«Սլավյանսկի բազար 2023» մրցույթում 1-ին մրցանակի է արժանացել Բելառուսի ներկայացուցիչը, 2-րդ մրցանակը կիսվել է Ռուսաստանի եւ Ուզբեկստանի ներկայացուցիչների միջեւ, իսկ 3-րդ մրցանակը բաժին է հասել Ղազախստանի եւ Ուզբեկստանի ներկայացուցիչներին:

Հուլիսի 12-14-ը կայացած «Սլավյանսկի բազար 2023» մանկական կատարողների մրցույթում Հայաստանի փոքրիկ պատվիրակ 10-ամյա Անահիտ Գալստյանը, մրցութային երկու օրերին դառնալով ֆավորիտներից մեկը, 133 միավորով զբաղեցրել է 2-րդ մրցանակային տեղը:

● *Հունիսի 20-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Իմ կնոջ անունն է Մորիս» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է անհրաժեշտ անել, եթե գնել ենք բնակարան եւ, որպես «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի բաժանորդ, ցանկանում ենք կատարել անվանափոխություն:

Ջեմմա Մանասյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պետք է բնակարանի/առանձնատան սեփականատերը (կարող է նաեւ ներկայանալ համասեփականատերը կամ լիազորված անձը՝ներկայացնելով նոտարի կողմից վավերացված լիազորագիր) «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման գրասենյակ ներկայացնել դիմում անվանափոխություն կատարելու վերաբերյալ՝ կցելով անձնագրի պատճեն, բնակարանի սեփականության վկայագիր:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ցանկալի է բնակարանը գնելիս վաճառողից պահանջել հստակեցնել ֆինանսական հարաբերություններն ընկերության հետ, գնել առանց պարտքի՝ հետագա բարդություններից խուսափելու համար:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարելի է դառնալ Ագրարային համալսարանի գրադարանի ընթերցող:

Գարիկ Ասատրյան (23 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Գրադարանի ընթերցող կարող են դառնալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողներն ու աշխատակիցները՝ գրադարան ներկայացնելով անձնագրի պատճենը եւ 3x4 չափի 1 լուսանկար:

ՀԱԱՀ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատակիցները պետք է ներկայացնեն նաեւ համապատասխան տեղեկանք՝ Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մի շարք աղբամաններ վերածվել են աղբանոցի, կարծես չեն մաքրվում: Քաղաքացիները բողոքում են տարածվող գարշահոտից ու թափթփվածությունից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+5 + 10 +22 + 25
Կոտայքի լեռներ	+ 5 +10 +22 + 24
Կոտայքի նախալեռներ	+13 + 15 +26 + 28
Գեղարքունիք	+8 + 10 +16 + 20
Լոռի	+9 + 14 +20 + 24
Տավուշ	+14 + 18 +23 + 28
Արագածոտնի լեռներ	+ 5 + 10 +21 + 23
Արագածոտնի նախալեռներ	+12 + 16 +25 + 29

Արարատ	+14 + 17 +30 + 32
Արմավիր	+12 + 14 +30 + 32
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +18 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+15 + 18 +30 + 32
Սյունիքի հովիտներ	+16 + 20 +24 + 28
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 21
ԼՂՀ	+16 + 19 +24 + 27
Երեւան	+13 + 15 +30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.7.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*